

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ

Սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոն

Արման Ղարազուլյան

փ.գ.թ. դոցենտ

«Փիլիսոփայության հիմունքներ»

(ոչ մասնագիտական դասընթաց)

*Ամփոփիչ քննության նախապատրաստման*

*մեթոդական ուղեցույց*

ԵՐԵՎԱՆ – 2016

Երաշխավորել է

ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի  
սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնը

Ամբիոնի վարիչ՝ փ.գ.դ. պրոֆեսոր Է. Հարությունյան

Ուղեցույցը կազմված է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի  
սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի  
«Փիլիսոփայության հիմունքներ» դասընթացի ծրագրի հիման վրա:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Փիլիսոփայության հիմունքներ» առարկան դասավանդվում է ԵՊՀ այլ ֆակուլտետների բակալավրիատի երկրորդ կուրսում: Առարկայի ստուգման ձևը ամփոփիչ քննությունն է, որը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Առարկան տրամադրում է 4 կրեդիտ:

Ուղեցույցը ուսանողներին է ներկայացնում քննական հարցաշարը, հիմնական գրականությունը և հարցաշարի բացված ու մեկնաբանված տարբերակը: Ուղեցույցում հստակեցված են այն բոլոր *ենթաթեմաները*, որոնց իմացությունը «Փիլիսոփայության հիմունքներ» դասընթացի ծրագրի շրջանակում ակնկալվում է ուսանողներից, տրված են *լրացուցիչ ցուցումներ* որակյալ և հետաքրքիր պատասխան պատրաստելու համար, նշված են *հարցեր*, որոնք կարող են տրվել կոնկրետ թեման ներկայացնելիս և անհրաժեշտության դեպքում *հստակեցումներ*՝ կապված գրականության ցանկի և գրականության լրացուցիչ աղբյուրների հետ:

*Քննությանը նախապատրաստվելիս և պատասխանելիս խորհուրդ է տրվում՝*

- Ուշադիր ընթերցել հարցի ձևակերպումը և պատասխանը պատրաստել ոչ թե մտքում ունենալով ընդհանուր թեման, այլ հարցի կոնկրետ ձևակերպումը:
- Յուրաքանչյուր հարցի պատասխանը պատրաստելիս առանձնացնել հարցի կարևորագույն մասերը և սահմանումները, նախ յուրացնել դրանք, հետո նոր միայն պատասխանը հարստացնել մանրամասներով:
- Ուշադիր լինել փիլիսոփայական ուսմունքների, փիլիսոփաների և կոնկրետ հասկացությունների անունները սովորելիս՝ հետագայում դրանք հստակորեն վերարտադրելու նպատակով:
- Մեփական տեսակետը գնահատելի է, սակայն քննական հարցերին պատասխանելիս, պատասխանը կառուցել այնպես, որ նախ փաստեք, որ ծանոթ եք հանձնարարված գրականությանն ու տեսություններին, նոր ներկայացնել հարցի շուրջ ունեցած սեփական պատկերացումները:
- Լինել ազատ ու անկաշկանդ, ձևավորել քննադատական մոտեցում, և, եթե կան *համարժեք հիմնավորումներ*, ազատորեն ներկայացնել *փաստարկված* անհամաձայնությունը այս կամ այն հարցադրման հետ:

## «Փիլիսոփայության հիմունքներ» դասընթացի

### քննական հարցաշար

1. Աշխարհայացք: Փիլիսոփայական աշխարհայացքի առանձնահատկությունները:
2. Փիլիսոփայության ակունքերը (դիցաբանություն և կրոն):
3. Փիլիսոփայությունը մշակույթի համակարգում: Փիլիսոփայության ֆունկցիաները:
4. Կեցության փիլիսոփայական ըմբռնումը: Նրա հիմնական ձևերը:
5. Սուբստանցիայի փիլիսոփայական ըմբռնումը: Մատերիան իբրև սուբստանցիա:
6. Շարժման փիլիսոփայական ըմբռնումը:
7. Զարգացման ըմբռնման փիլիսոփայական հայեցակարգերը (դիալեկտիկա և մետաֆիզիկա):
8. Տարածության և ժամանակի փիլիսոփայական ըմբռնումը:
9. Սոցիալական տարածության և ժամանակի առանձնահատկությունները:
10. Կեցության համընդհանուր կապերը (էություն և երևույթ, եզակի և ընդհանուր):
11. Կեցության կառուցվածքային կապեր (ամբողջ և մաս, բովանդակություն և ձև):
12. Համակարգ, տարր և կառուցվածք:
13. Պատճառականության սկզբունքը, անհրաժեշտություն և պատահականություն, հնարավորություն և իրականություն:
14. Արտացոլման էությունը և հոգեկանի ընդհանուր բնութագիրը:
15. Գիտակցության սոցիալական բնույթը: Աշխատանքի և լեզվի անտրոպոգեն (մարդածին) ֆունկցիան:
16. Գիտակցականի և անգիտակցականի փոխհարաբերությունը մարդու հոգեկանում (գիտակցական, անգիտակցական, ենթագիտակցական, ինքնագիտակցական):
17. Գիտելիքի էմպիրիկ և տեսական մակարդակները:
18. Մեթոդ և մեթոդաբանություն, գիտական մեթոդների տիպաբանությունը:
19. Աշխարհի ճանաչելիության հիմնախնդիրը (գնոստիցիզմ, ագնոստիցիզմ, սկեպտիցիզմ):
20. Զգայական և ռացիոնալ ճանաչողություն:
21. Ճշմարտության փիլիսոփայական ըմբռնումը: Ճշմարտություն, մոլորություն, սուտ:
22. Ճշմարտության չափանիշի պրոբլեմը:
23. Բնության փիլիսոփայական ըմբռնումը: Բնական և արհեստական միջավայր:
24. Բնության և հասարակության փոխազդեցության օրինաչափությունները պատմական տարբեր դարաշրջաններում:
25. Արդի էկոլոգիական պրոբլեմների փիլիսոփայական ըմբռնումը:
26. Արդի տեխնոլոգիական դարաշրջանը: Տեխնոկրատական ճգնաժամի էությունը:

27. Մարդու փիլիսոփայական ըմբռնումը:
28. Մարդու ծագման հիմնահարցը: Անտրոպոսոցիոգենեզի էությունը:
29. Կենսաբանականը և սոցիալականը մարդու կառուցվածքում:
30. Կյանքի իմաստը: Կյանքի և մահվան հիմնահարցը:
31. Ազատության փիլիսոփայական ըմբռնումը:
32. Մարդու օտարման փիլիսոփայական ըմբռնումը:
33. Սոցիալական փիլիսոփայության առարկան:
34. Հասարակության ծագման հիմնահարցը: Հասարակություն և հասարակական հարաբերություններ:
35. Հասարակական համակարգի բնույթի հիմնահարցը
36. Պատմության փիլիսոփայություն: Պատմության իմաստն ու նշանակությունը:
37. Պատմության ֆորմացիոն և քաղաքակրթական մոտեցումների ընդհանուր բնութագիրը:
38. Մշակույթ և քաղաքակրթություն:
39. Սոցիալական առաջադիմությունը և նրա չափանիշները:
40. Սոցիալական ճանաչողության առանձնահատկությունները:
41. Պատմության միասնության և բազմազանության պատճառները:
42. Պատմական պրոցեսի սուբյեկտները և շարժիչ ուժերը (պահանջմունքներ և շահեր):
43. Հասարակության սոցիալական կյանքի ընդհանուր բնութագիրը:
44. Անցումային հասարակություն:
45. Հասարակության քաղաքական կյանքի ընդհանուր բնութագիրը: Պետություն և իրավունք:
46. Հասարակության տնտեսական ոլորտի ընդհանուր բնութագիրը:
47. Ընտանիքը սոցիալական համակարգի կառուցվածքում:
48. Հասարակության հոգևոր կյանքի ընդհանուր բնութագիրը:
49. Ազգային հոգեբանության կառուցվածքային բնութագիրը:
50. Ազգային ինքնություն և ազգային խառնվածք:
51. Հասարակական գիտակցության կառուցվածքը: Հասարակական հոգեբանություն և գաղափարախոսություն:
52. Հասարակական գիտակցության ձևերը և դրանց տարբերակման չափանիշները:
53. Բարոյական գիտակցություն:
54. Գեղագիտական գիտակցություն:
55. Գիտության սոցիալական ֆունկցիաները: Սցիենտիզմ և հակասցիենտիզմ:
56. Մարդ, անձ, անհատականություն հասկացությունների փիլիսոփայական բնութագիրը:

## Գրականություն

1. Հովսեփյան Ա. Ա., Սոցիալական փիլիսոփայության հիմունքներ, Եր., 2003:
2. Հակոբյան Ս. Ս., Փիլիսոփայություն, Եր. 2007:
3. Ասատրյան Մ. Փիլիսոփայության ներածություն, Եր. 2004 թ.
4. Բալայան Ա., Փիլիսոփայություն, Եր. 2012
5. Կանկե Վ., Փիլիսոփայություն, Եր. 2001
6. Շաքարյան Հր.Գ., Փիլիսոփայություն. Երևան, 2005:
7. Алексеев В., Панин А., Философия, Учебник, Москва, 2003:
8. А., Спиркин, Философия, Учебник, Москва, 2003:
9. Философия , Учебник, Под ред. Кахановского, Ростов 2003:
10. Философия, Учебник, Под ред. Лавриненко, Москва, 2003:
11. Философия, Курс лекций, Под ред . Калашникова, Москва, 2001:
12. Философия, Учебник, Под ред. И. Т. Фролова, М, 2004:

## ***Քննության նախապատրաստման ուղեցույց***

### **1. Աշխարհայացք: Փիլիսոփայական աշխարհայացքի առանձնահատկությունները:**

- Ի՞նչ է աշխարհայացքը, ինչպե՞ս է այն սահմանվում, ինչպիսի՞ բաղադրիչներից է կազմված:
- Ինչու՞ է կարևոր աշխարհայացքի մասին խոսել, աշխարհայացքի ի՞նչ տեսակներ կան, ինչո՞վ է նման կամ տարբեր փիլիսոփայական աշխարհայացքը աշխարհայացքի այլ ձևերից:
- Փիլիսոփայական աշխարհայացքի ի՞նչ այլ առանձնահատկություններ կարելի է նշել:

### **2. Փիլիսոփայության ակունքները (դիցաբանություն և կրոն)**

- Նախափիլիսոփայական՝ կրոնադիցաբանական պատկերացումների առանձնահատկությունները (բացատրել, թե ինչ բան է դիցաբանությունը):
- Փիլիսոփայության ծագման, ձևավորման գործընթացը: Ի՞նչ հակասություններ, տարբերություններ կան աշխարհի կրոնադիցաբանական և փիլիսոփայական ըմբռնումների միջև:
- Փիլիսոփայության առաջին ուսմունքների հարցադրումները: Փիլիսոփայությունն՝ իբրև տեսական իմացության առաջին պատմական ձև:

Փիլիսոփայության ծագման հարցի այլ հնարավոր մոտեցում [համառոտ գծանկար](#)

! Հնարավոր հարց՝ «Իսկ կրոնը և դիցաբանությունը նույնակա՞ն են, թե՞ տարբեր»:

### **3. Փիլիսոփայությունը մշակույթի համակարգում: Փիլիսոփայության ֆունկցիաները:**

- Փիլիսոփայությունը՝ որպես մարդկության հոգևոր մշակույթ:
- Փիլիսոփայության և հոգևոր մշակույթի այլ ձևերի փոխհարաբերության հարցը (փիլիսոփայություն և գիտություն, փիլիսոփայություն և արվեստ):
- Փիլիսոփայության հիմնական՝ աշխարհայացքային և մեթոդաբանական ֆունկցիաները, փիլիսոփայության ֆունկցիաների դասակարգման այլ մոտեցումներ:

#### **4. Կեցության փիլիսոփայություն: Կեցության հիմնական ձևերը**

- «Կեցություն» կատեգորիայի առաջացման դրդապատճառները. մթա 6-րդ դարի աշխարհայացքային ճգնաժամը, նոր՝ փիլիսոփայական աշխարհայացքի ձևավորումը:
- Պարմենիդեսի ուսմունքը կեցության մասին: Կեցության ըմբռնումը այլ փիլիսոփայական համակարգերում:
- Կեցության սահմանումը և ձևերը՝ բնական և մարդկային, նրանց ենթաձևերը:

#### **5. Սուբստանցիայի փիլիսոփայական ըմբռնումը: Մատերիան իբրև սուբստանցիա:**

- Ի՞նչ է սուբստանցիան և ո՞րն է սուբստանցիայի ելակետային գաղափարը (թեթև անդրադարձ անտիկ փիլիսոփայությանը):
- Սուբստանցիայի ընկալման մոտեցումները, օրինակ՝ մոնիզմ, դուալիզմ, պլյուրալիզմ, մատերիալիզմ, իդեալիզմ:
- Մատերիայի սուբստանցիոնալ ըմբռնումը: Մատերիայի գոյաբանական և իմացաբանական տեսանկյունները:

#### **6. Շարժման փիլիսոփայական ըմբռնումը**

- Շարժման փիլիսոփայական սահմանումը: Շարժումը՝ որպես մատերիայի ատրիբուտային հատկություն:
- Շարժում և դադար:
- Շարժման ձևերը: Դրանց դասակարգման տրամաբանությունը և ներքին կապը:
- Զարգացում: Շարժման և զարգացման փոխհարաբերությունը:

#### **7. Զարգացման ըմբռնման փիլիսոփայական հայեցակարգերը (դիալեկտիկա, մետաֆիզիկա)**

- Զարգացման գործընթացների ընդհանուր բնութագիրը:
- Զարգացման էության ու իմաստի երեք հարցադրումները:
- Ի՞նչ են դիալեկտիկան և մետաֆիզիկան (զարգացման ըմբռնման տարբերությունները):
- Դիալեկտիկական մոտեցման հիմնական տրամաբանությունը:
- 

#### **8. Տարածության և ժամանակի փիլիսոփայական ըմբռնումը**

- Տարածության և ժամանակի սահմանման հիմնախնդիրը, Օգոստինոս Երանելիի մոտեցումը:



- Տարածության և ժամանակի սուբստանցիոնալ և ռեյացիոն ըմբռնումները (խոսել մինչև Էյնշտեյնը եղած պատկերացումներից և Էյնշտեյնի տեսությունից հետո եղած փոփոխությունների մասին):
- Տարածության և ժամանակի առանձնահատկությունները (եռաչափ, միաչափ և այլն):
- Սոցիալական ժամանակ և տարածություն (քանի որ այս կետին առանձին հարց կա նվիրված, այստեղ կարիք չկա շատ ծավալվել, բայց կարելի է ցույց տալ թեմայի իմացությունը): Որպես վերջին կետի այլընտրանք՝ կարելի է խոսել ոչ էվկլիդեսյան երկրաչափության մասին:

**! Հետաքրքիր հարց մտորելու համար՝ «Իսկ եղե՞լ է ժամանակ, երբ ժամանակ չի եղել»**

### **9.Սոցիալական ժամանակի և տարածության առանձնահատկությունները:**

- Տալ սոցիալական տարածության և ժամանակի ընդհանուր բնութագիրը, ապա թվել մի քանի առանձնահատկություն:
- Սոցիալական տարածության ըմբռնումը: Այստեղ կարելի է անցում կատարել բնական և արհեստական միջավայրի փոխհարաբերության հիմնախնդրին: Խոսել դրանց կապի և կարևորության մասին:
- Սոցիալական ժամանակի առանձնահատկությունները քննարկելիս խոսել այն հարցի մասին, թե ինչպես է սոցիալական ժամանակի հիմնական առանձնահատկությունը նոր հիմնախնդիրներ ու մարտահրավերներ առաջադրում մարդկությանը:

### **10. Կեցության համընդհանուր կապերը (եզակի և ընդհանուր, էություն և երևույթ):**

- Դիալեկտիկայի կատեգորիաների առանձնահատկությունները, կատեգորիա և հասկացություն տերմինների տարբերությունը:
- «Եզակին» և «ընդհանուրը»՝ որպես դիալեկտիկական մտածողության արտացոլման ձև:
- «Երևույթը» և «էությունը» որպես կառուցվածքայնության իմացաբանական կատեգորիաներ, դրանց առանձնահատկությունները՝ ներքին և արտաքին, մակերեսային և խորքային, տեսանելի և թաքնված:

**! Պատրաստել հետաքրքիր օրինակներ:**

### **11. Կեցության կառուցվածքային կապեր (ամբողջ և մաս, բովանդակություն և ձև):**

- «Ամբողջ» և «մաս» կատեգորիաները, սահմանումները, առանձնահատկությունները:
- Ինչպես է լուծվում հոլիզմի և մերիզմի բանավեճը տարբեր տիպի ամբողջներում:

- «Բովանդակություն» և «ձև» կատեգորիաները, դրանց անխզելի միասնության և փոխհարաբերության հարցը:

! Պատրաստել հետաքրքիր օրինակներ: Հնարավոր հարց՝ «Ի՞նչ է նշանակում «դիալեկտիկական միասնություն»:

## 12. Համակարգ, տարր և կառուցվածք

- Սահմանել «կառուցվածք», «տարր», «համակարգ» կատեգորիաները:
- «Համակարգ» կատեգորիայի փիլիսոփայական բովանդակության երկու հատկանիշները:
- Համակարգերի տեսակները (պարզ և բարդ, բաց և փակ):

## 13. Պատճառականության սկզբունքը, անհրաժեշտություն և պատահականություն, հնարավորություն և իրականություն:

- Ի՞նչն է ընկած դետերմինիզմի փիլիսոփայական բովանդակության հիմքում:
- Դետերմինիզմ և պատճառականություն:
- Պատճառականության բնութագրիչները (անհրաժեշտություն և միանշանակություն):
- Ինչպե՞ս են կապված պատահականությունն ու անհրաժեշտությունը:
- Իրականության բնորոշումը (ընդհանուր գծերը. շատ մանրամասներ այստեղ պետք չեն): Հնարավորության և իրականության կապը:

## 14. Արտացոլման էությունը և հոգեկանի ընդհանուր բնութագիրը

- Արտացոլումը որպես մատերիայի համընդհանուր հատկություն:
- Արտացոլման մակարդակները (անկենդան և կենդանի բնություն) և տեսակները (իզոմորֆիզմ, հոմոմորֆիզմ, գրգռականություն, զգայունակություն, հոգեկան):
- Հոգեկանը որպես արտացոլման բարձրագույն աստիճան: Հոգեկան և գիտակցություն:

## 15. Գիտակցության սոցիալական բնույթը: Աշխատանքի և լեզվի անտրոպոգեն (մարդածին) ֆունկցիան:

- Ի՞նչ է գիտակցությունը առհասարակ:
- Ո՞րն է գիտակցության սոցիալական բնույթը՝ գիտակցության առաջացման կարևորագույն պայմանները՝ աշխատանք և լեզու:
- Ի՞նչ է աշխատանքը, ինչին է այն կոչված: Ի՞նչպես է աշխատանքը ստեղծել ժամանակակից մարդուն գոյաբանական (Homo erectus), իմացաբանական և բարոյական առումներով:

- Լեզուն՝ որպես հաղորդակցման միջոց:
- Հասարակական բարիքները՝ որպես լեզվի և աշխատանքի փոխազդեցության արդյունք:

Լեզվի մասին խոսել շատ թեթև, խորքային սահմանումներ պետք չեն, ներկայացնել միայն այնքանով, ինչքանով որ կապված է բուն հարցի հետ: Աշխատանքի 3 բաղադրիչների ըմբռնումը ևս այս հարցում էական չի:

**16. Գիտակցականի և անգիտակցականի փոխհարաբերությունը մարդու հոգեկանում (գիտակցական, անգիտակցական, ենթագիտակցական, ինքնագիտակցական):**

- Ի՞նչ է գիտակցությունը:
- Ի՞նչ է անգիտակցականը: Ո՞րն է այս երկուսի տարբերությունը, խոսել դրանց փոխազդեցության օրինչափությունների մասին:
- Կարելի է մի փոքր անդրադարձ կատարել իդեալիստների պատկերացումներին, ցանկալի կլինի խոսել Զիգմունդ Ֆրոյդի մասին:
- Ի՞նչ է ենթագիտակցությունը:
- Ինքնագիտակցություն, դրա նշանակությունը մարդու կյանքում:

! Հիմնական հարցը, որ այստեղ տրվելու է՝ մարդու մոտ ավելի շատ գերակշռում է գիտակցականը, թե՞ անգիտակցականը (լայն առումով): Պատասխանը պետք է հիմնավորել և դրա համար պետք է հստակորեն պատկերացնել ոլորտների բովանդակությունը:

**17. Գիտելիքի Էմպիրիկ և տեսական մակարդակները:**

- Գիտական ճանաչողություն և իմացություն հասկացությունների փոխհարաբերությունը:
- Գիտելիքի Էմպիրիկ մակարդակը (բնութագրել, բերել օրինակներ): Էմպիրիկ մակարդակի և ճանաչողության զգայական մակարդակի տարբերությունը:
- Գիտելիքի տեսական մակարդակը (բնութագրել, բերել օրինակներ): Տեսական գիտելիքների և գիտական տեսության կապը:

**18. Մեթոդ և մեթոդաբանություն, գիտական մեթոդների տիպաբանությունը:**

- Ի՞նչ է մեթոդը: Ինչի՞ համար են նախատեսված մեթոդները:
- Մեթոդների 3 մակարդակները՝ Էմպիրիկ, տեսական, համատրամաբանական:
- Էմպիրիկ մեթոդների ընդհանուր բնութագիրը (դիտարկում, գիտափորձ):
- Տեսական մեթոդների ընդհանուր բնութագիրը (ձևայնացում, արքիոմատիկ, հիպոթետիկ):

- Համատրամաբանական մեթոդներ (վերլուծություն, համադրում, վերացարկում, մոդելավորում, դեդուկցա, ինդուկցիա):

! Տեսական և համատրամաբանական մեթոդները կարելի է ներկայացնել որպես 1 խումբ

! Օգնություն՝ Հակոբյան - էջ 300, Ասատրյան- էջ 97, Կանկե- էջ 230:

**19. Աշխարհի ճանաչելիության հիմնախնդիրը (գնոստիցիզմ, ագնոստիցիզմ, սկեպտիցիզմ):**

- Աշխարհի ճանաչելիությունը՝ որպես իմացաբանության ելակետային հիմնախնդիր:
- Գնոստիցիզմը որպես իմացաբանական լավատեսական մոտեցում:
- Ագնոստիցիզմը՝ որպես իմացաբանական ուսմունք: Ագնոստիցիզմի փաստարկները:
- Սկեպտիցիզմի բնութագիրը և տեսական հիմքերը:

**20. Զգայական և ռացիոնալ ճանաչողություն**

- Իմացության գործընթացը և նրա 2 աստիճանները՝ զգայական և ռացիոնալ:
- Զգայական ճանաչողության մակարդակները՝ զգայություն, ընկալում, մտապատկեր:
- Ռացիոնալ ճանաչողության մակարդակները՝ հասկացություն, դատողություն, մտահանգում:
- Միտքը և մտածողությունը՝ որպես ռացիոնալ ճանաչողության արդյունք:
- Մենսուալիզմ և ռացիոնալիզմ:

! Մակարդակները ներկայացնելու համար պատրաստել կոնկրետ օրինակներ 6 մակարդակներից յուրաքանչյուրի համար: Հասկանալ նրանց նմանություններն ու տարբերությունները:

**21. Ճշմարտության փիլիսոփայական ըմբռնումը: Ճշմարտություն, մոլորություն, սուտ:**

- Ճշմարտությունը որպես իմացաբանության առանցքային կատեգորիա.
- Ի՞նչ է ճշմարտությունը, (նկարագրել, հստակորեն սահմանել):
- Խոսել ճշմարտության հիմնական որակների մասին (օբյեկտիվություն, կոնկրետություն):
- Հարաբերական և բացարձակ ճշմարտություն:
- Սահմանել մոլորությունը և սուտը, տարբերակել, բերել օրինակներ:

Հատկապես ուշադիր լինել 4-րդ կետի նկատմամբ: Պատրաստել օրինակներ: Որպես լրացուցիչ թեմա՝ կարելի է նաև անդրադարձնալ «Ճիշտ» և «Ճշմարտություն» հասկացությունների փոխհարաբերությանը:

## **22. Ճշմարտության չափանիշի պրոբլեմը:**

- Ինչ ենք հասկանում Ճշմարտության չափանիշ ասելով:
- Կորեսպոնդենցիայի (համապատասխանության) չափանիշ:
- Կոհերենտական չափանիշ:
- Ճշմարտության չափանիշի պրագմատիստական մոտեցումը: Պրակտիկան որպես Ճշմարտության չափանիշ:

Յուրաքանչյուրի մասին խոսելիս նշել այդ չափանիշները սահմանողների մասին, նաև պատրաստել հետաքրքիր օրինակներ չափորոշիչներից յուրաքանչյուրի առավելությունների և սահմանափակությունների մասին:

! Հարցի պատասխանները կարելի է գտնել Կանկեի և Հակոբյանի գրքերում:

## **23. Բնության փիլիսոփայական ըմբռնումը: Բնական եւ արհեստական միջավայր**

- Բնության փիլիսոփայական ըմբռնումը, բնության «լայն» և «նեղ» իմաստները (բերել օրինակներ):
- Անդրադարձնալ բնության իմաստավորման տարբեր ըմբռնումներին (օրինակ բնության մեջ գործող անկազմակերպ տարերային ուժերին, որոնց մարդիկ չեն կարող կառավարել, ճանաչել կամ օգտագործել եւ այլն . . .):
- Բնական միջավայր. տալ սահմանումը, խոսել բնական միջավայրի մեջ մտնող ոլորտների մասին՝ աշխարհագրական և կենսաբանական, խոսել բնական միջավայրի հետ ունեցած մարդու փոխազդեցության մասին:
- Արհեստական միջավայրի արդի առանձնահատկությունները:

Ցուցում՝ փորձել բացի տեսական մասից, պատասխանի մեջ ներառել նաև թեմայի հետ կապված որոշ արդի հիմնախնդիրներ:

## **24 Բնության և հասարակության փոխազդեցության օրինաչափությունները պատմական տարբեր դարաշրջաններում:**

- Բնության հետ մարդկային հարաբերությունների հիմնախնդիրը:
- Բնության մասին մարդկանց աշխարհայացքային վերաբերմունքի ձևավորումը (նախնադար, ստրկատիրական ժամականաշրջան, քրիստոնեություն, վերածնունդ):

- Արդի ժամանակաշրջանում բնության հանդեպ մարդու վերաբերմունքի առանձնահատկությունները և տարբերությունները նախորդ դարաշրջաններից:

! Հարցն ավելի շատ ընդհանուր-աշխարհայացքային է, ըստ այդմ պատրաստում ենք հետաքրքիր ու տպավորիչ օրինակներ: 2-րդ կետի պատմական անդրադարձը կարող է լինել ընդհանրական՝ առանց շատ մանրամասների:

## 25 Արդի էկոլոգիական պրոբլեմների փիլիսոփայական ըմբռնումը

- Մարդ և բնություն հարաբերությունները արդի դարաշրջանում: Խոսել համընդհանուր ու տազնապ առաջացնող խնդիրներից, բնության աղտոտվածությունից ու դրա մակարդակից և հետո երրորդ կետում...
- Էկոլոգիական փիլիսոփայության ըմբռնումը և նպատակը:
- Էկոլոգիական փիլիսոփայության կողմից առաջարկվող գաղափարները՝ ուղղված բնապահպանությանը:

Օգնություն՝ Հակոբյան - էջ 369:

## 26. Արդի տեխնոլոգիական դարաշրջանը: Տեխնոկրատական ճգնաժամի էությունը:

- 20-րդ դարը՝ որպես գիտության և տեխնիկայի դար: Արդի տեխնոլոգիաներ և տեխնիկայի փիլիսոփայություն:
- Տեխնիկական որպես մարդու և բնության փոխազդեցության ներդաշնակությունը խախտող գործոն (որպես հետաքրքիր նյութ կարելի է վերցնել Ռուսսոյին և նրա էսսեն՝ «Նպաստում են արդյոք գիտության և տեխնիկայի զարգացումը մարդկային բարքերի կատարելագործմանը»):
- Տեխնոկրատական ճգնաժամի բնորոշումը, դրա առաջացման պատճառները (այստեղ պետք է խոսել ժամանակից տեխնոլոգիաների՝ մարդու վրա բացասական ազդեցության մասին):

! Այս թեման պատրաստելիս կարող եք օգտվել նաև Ա. Ղարազուլյանի հարցազրույցից [հղում](#)

## 27. Մարդու փիլիսոփայական ըմբռնումը:

- Մարդու փիլիսոփայական ըմբռնման առանձնահատկությունները:
- Մարդու հիմնախնդիրը որպես փիլիսոփայության կենտրոնական հարց:
- Մարդու փիլիսոփայական ըմբռնումները պատմական տարբեր դարաշրջաններում:

Յուցում՝ այս հարցը միտված է մարդու թեմայի ընդհանուր ներկայացմանը- Ո՞րն է մարդու փիլիսոփայական ըմբռնումը, մարդու ուրիշ ի՞նչ ըմբռնումներ կան; այդ ո՞ր հարցերն են մարդու հետ կապված, որոնք կարելի է պատասխանել միայն փիլիսոփայության միջոցով: Ինչու՞ է մարդու հիմնահարցը համարվում փիլիսոփայական հիմնական հարց: Ի՞նչ հիմնական թեմաներ կարելի է առանձնացնել մարդու հետ կապված: Փորձեք հետաքրքիր մտքեր ու գաղափարներ գտնել 3-րդ կետից: Օրինակ՝ «Ճանաչիր ինքդ քեզ» - Սոկրատես, «Փիլիսոփայել նշանակում է պատրաստվել մահվան» - Պլատոն, «Փիլիսոփայության հիմնական խնդիրը ինքնասպանության խնդիրն է՝ արժե այս կյանքը արդյոք ապրել»- Քամյու: Կարելի է նաև մարդու ծագման պրոբլեմի մասին էլ խոսել՝ բացատրելով ինչու է դա այդքան կարևոր, նաև՝ կյանքի իմաստի, ապրման, մահվան... Այս հարցը ներկայացնելուց ենթադրվելու է, որ թեման առհասարակ ուսանողը լավ պատկերացնում է...

### **28. Մարդու ծագման հիմնահարցը. անթրոպոսոցիոգենեզի էությունը:**

- Մարդու ծագման կրոնական տեսակետի կարճ անդրադարձ:
- Մարդու ծագման հիմնախնդիրը ըստ մատերիալիստների և իդեալիստների, կարելի է խոսել մի քանի ուղղության մասին, օրինակ՝ Դարվին, Էնգելս, մուտացիոն տեսություն, նոր քրիստոնեական ուսմունք և այլն:
- Անթրոպոսոցիոգենեզի պատկերացումները և դրա հիմնական սկզբունքը:
- Լեզուն և տաբուները՝ որպես նախնադարյան բարոյականության հիմք:

### **29. Կենսաբանականը և սոցիալականը մարդու կառուցվածքում:**

- Մարդը՝ որպես բարձրակարգ կաթնասունների տեսակ:
- Մարդը որպես «home habilis» և «homo erectus»: Սրան կարելի է անրադառնալ շատ կարճ:
- Մարդու երկակի բնույթի՝ կենսաբանականի և սոցիալականի պայքարը մի շարք տեսություններում (օրինակ՝ սոցիալ-դարվինիզմ, ֆրոյդիզմ, ռասիզմ, մարքսիզմ և այլն)
- Կենսաբանականի և սոցիալականի ներդաշնակությունը մարդու մեջ:

### **30. Կյանքի իմաստը: Կյանքի եւ մահվան հիմնահարցը:**

- Ի՞նչ է կյանքը, ո՞րն է կյանքի իմաստը (ներկայացնել հիմնախնդիրը, բերել օրինակներ):
- Մարդու կյանքի նպատակը (հանուն ինչի արժե ապրել, ինչպե՞ս են մարդիկ իրականացնում իրենց կյանքի նպատակները, ի՞նչ քայլերի են գնում)
- Մահվան ընկալման հիմնախնդիրը:

- Անմահության գաղափարը: Որտեղի՞ց է առաջանում անմահության գաղափարը... ինչպե՞ս է վերջինս արտահայտվում (Օրինակ՝ բարոյական ու գեղարվեստական կերպարների միջոցով և այլն):

Ցուցում՝ կյանքի իմաստի հարցը փիլիսոփայության հավերժական է խնդիրներից մեկն է: Ըստ այդմ, խնդիրը ոչ այնքան պատրաստի պատասխաններ ունենալն է, որքան մտորել այն հարցի շուրջ, թե ինչը կարող է իմաստավորել մարդու կյանքը: Ցանկալի կլինի, որ նաև մի քիչ քննադատական տեսանկյունից նայեք կարծրատիպային պատասխաններին - սերունդ կամ հիշողություն թողնել; հաճույք ստանալ; լինել երջանիկ... Մահվան հետ կապված հիմնական հարցը լինելու է հետևյալը «Փաստը, որ մենք մահկանացու ենք, իմաստավորու՞մ, թե՞ իմաստագրելու՞մ է մեր կյանքը»:

### 31. Ազատության փիլիսոփայական ըմբռնումը:

- Ազատությունը որպես փիլիսոփայական հիմնախնդիր:
- Ազատություն «ինչ-որ բանից» և ազատություն «հանուն ինչ-որ բանի»:
- Ազատությունը՝ որպես «ընտրություն» (Էկզիստենցիալիզմ), «Փախուստ ազատությունից» (Ֆրոմ), անհրաժեշտություն և ազատություն («Ազատությունը գիտակցված անհրաժեշտություն է»- Մարքս) ([3-ից անդրադառնալ առնվազն 2-ին](#)):
- Ազատության և պատասխանատվության հիմնախնդիրը:

! Ֆրոմի՝ «Փախուստ ազատությունից» հայեցակարգը [հղում](#)

### 32. Մարդու օտարման փիլիսոփայական ըմբռնումը:

- Օտարման երևույթի նկարագրությունը և փիլիսոփայական մեկնաբանությունները:
- Օտարման պատճառները, փորձեք արդիականացնել:
- Օտարման դրսևորումները արդի հասարակությունում (տեխնիկական օտարում, սոցիալական օտարում (սոցիալական մահ), քաղաքական օտարում, ինքնաօտարում):

! Հարցի հետ կապված տեղադրված են լրացուցիչ նյութեր [հղում](#)

### 33. Սոցիալական փիլիսոփայության առարկան

- Ո՞րն է սոցիալական փիլիսոփայության ուսումնասիրության առարկան:
- Սոցիալական փիլիսոփայությունը՝ հասարակությունն ուսումնասիրող մյուս գիտություններից տարբերակող առանձնահատկությունները:



- Հասարակության բնապաշտական ըմբռնման և սոցիոլոգիզմի պատմական տեսանկյունները:
- Սոցիալականությունը՝ որպես հասարակական համակարգի տարբերակիչ հատկություն:

**34. Հասարակության ծագման հիմնահարցը: Հասարակություն և հասարակական հարաբերություններ:**

- Մարդու և հասարակության ծագումը՝ որպես մեկ միասնական գործընթացի երկու անխզելի կողմեր:
- Լեզվի և աշխատանքի ազդեցությունը հասարակության ծագման վրա:
- Հասարակության ըմբռնումները, հասարակությունը որպես համակարգ:

Ըստ ցանկության՝ կարելի է այս հարցի մեջ քննարկել որևիցե հետաքրքիր տեսություն մարդու և հասարակության մասին (Պիեր Շարդեն, Պորշն, Դարվին, Ֆրեյդ, Հոբս, Լոկ):

**35. Հասարակական համակարգի բնույթի հիմնահարցը**

- Ի՞նչ է համակարգը: Հասարակական համակարգը համակարգերի տիպաբանության համատեքստում (պարզ-բարդ, բաց-փակ):
- Ինչպիսի՞ն է հասարակական համակարգը (խոսել նյութականի և հոգևորի, օբյեկտիվի և սուբյեկտիվի, պատմական անհրաժեշտության և առօրյա գիտակցական գործունեության մասին):
- Ի՞նչն է ընկած հասարակական համակարգի հիմքում (խոսել սոցիալական գործունեության մասին):

**36. Պատմության փիլիսոփայություն: Պատմության իմաստն ու նշանակությունը:**

- Պատմությունը որպես փիլիսոփայական ուսումնասիրության օբյեկտ:
- Պատմագիտություն և պատմության փիլիսոփայություն:
- Պատմության իմաստի և նշանակության հարցադրումները փիլիսոփայական ուսմունքներում:

Գրականություն՝ Հակոբյան - էջ 328

Հարցը պատասխանելիս կարող եք նաև օգտագործել օրինակներ 37, 39, 41 հարցերից

**37. Պատմության ֆորմացիոն և քաղաքակրթական մոտեցումների ընդհանուր բնութագիրը:**

- Պատմության ֆորմացիոն ըմբռնում (Մարքս):
- Անձնական կախվածության ձևերը ֆորմացիոն մոտեցման համատեքստում:

- Քաղաքակրթական մոտեցում. Շպենգլեր, Թոյնբի:
- Լոկալ քաղաքակրթություններ, դրանց ընդհանուր բնութագիրը:

4-րդ կետում շատ մանրամասներ պետք չեն, կարևորը ընդհանուր տրամաբանությունը պատկերացնելն է: Գրականություն՝ Հակոբյան - էջ 328 և էջ 352:

### 38. Մշակույթ և քաղաքակրթություն

- «Մշակույթ» հասկացությունը: Հոգևոր և նյութական մշակույթ:
- «Քաղաքակրթություն» հասկացության ըմբռնումը:
- Ո՞րն է մշակույթի և քաղաքակրթության կապը և տարբերությունը:

Կարևոր է, որ ուսանողը այս հարցը պատասխանելիս հստակ կարողանա տարբերակել այս 2 հասկացությունները.. (կան տարբերակման տարբեր մոտեցումներ - Հակոբյանը մի տեսանկյուն է առանձնացնում, պատմության փիլիսոփայության քաղաքակրթական տեսանկյուններում կա այլ մոտեցում): Կարելի է լրացուցիչ անդրադարձ կատարել արդի քաղաքակրթական հիմնախնդիրներին...

### 39. Սոցիալական առաջադիմությունը և նրա չափանիշները:

- Ինչ ենք հասկանում սոցիալական առաջադիմություն ասելով:
- Հարցի ինչպիսի հնարավոր լուծումներ են առաջադրվել պատմության փիլիսոփայության համատեքստում (Հեգել, Մարքս, Շպենգլեր):
- Սոցիալական առաջադիմության հնարավոր չափանիշները (տեխնոլոգիական, տնտեսագիտական, ազատության աստիճանը, ռազմական սպառազինության մակարդակը, ժողովրդավարության աստիճանը...):

Հարցը ներկայացնելիս ուսանողը պետք է ներկայացնի իր մտորումներն այն մասին, թե ինչ հնարավոր չափանիշներ կարելի է առաջ քաշել տարբեր հասարակությունների առաջընթացը գնահատելու համար, միաժամանակ ցույց տա, որ ցանկացած չափորոշիչ ունի նաև իր սահմանափակումները:

1. Տեխնոլոգիական - արդյո՞ք ավելի զարգացած տեխնոլոգիաները անպայմանորեն ենթադրում են ավելի զարգացած հասարակություն: Հիշում ենք Ռուսսոյին: 2. Տնտեսագիտություն - Չինաստանը այսօր համար 1-ն է, բայց ի՞նչ գնով... 3. Ազատությունը իհարկե լավ բան է, բայց դեռևս Ֆրոմն էր նշում, որ ինչ-որ սահմանից այն կողմ այն նույնքան ծանր է մարդու հմար, որքան ազատության սահմանափակումը: Օրինակ, միասեռ ամուսնության ազատությունը արդյո՞ք միանշանակա՞ն ավելի զարգացած հասարակության նշան է: 4. Ռազմականը- կարելի է գտնել օրինակներ, ասենք նույն ԽՍՀՄ պատմությունը դրա վառ օրինակ է: 5. Կարելի է նշել ժողովրդավարության աստիճանը որպես չափորոշիչ, ու հարց՝ արդյոք եվրոպական ժողովրդավարության անհատակենտրոն մտածողությունը կարող է չափանիշ հանդիսանալ բոլոր այլ

մշակույթների (օրինակ՝ ավանդապաշտական) համար: Հիշում ենք Իրաքում ժողովրդավարության ստեղծման օրինակը: Լրացուցիչ հարց - իսկ կա՞ն բաներ, որոնք «ավելի զարգացած» հասարակությունները կարող են սովորել ավելի «հետամնացներից»:

#### 40. Սոցիալական ճանաչողության առանձնահատկությունները:

- Սոցիալական ճանաչողության ընդհանուր բնութագիրը և նպատակները:
- Սոցիալական և բնագիտական իմացությունների տարբերակիչ գծերը:
- Սուբյեկտի դերը սոցիալական ճանաչողության գործընթացում:

#### 41. Պատմության միասնության և բազմազանության հիմնահարցը

- Պատմության միասնության օգտին բերվող հնարավոր փաստարկներ:
- Պատմության բազմազանության օգտին բերվող փաստարկներ:
- Պատմության ֆորմացիոն և քաղաքակրթական տեսությունները քննարկվող հարցի համատեքստում:
- Այլ հնարավոր մոտեցում (տեխնոկրատական քաղաքակրթություն, համաշխարհայնացում, «Պատմության ավարտը» ըստ Ֆուկույամայի, ազգայնական շարժումները արդի դարաշրջանում):

! Հարցի հետ կապված տեղադրված են լրացուցիչ նյութեր [հղում](#)

#### 42. Պատմական պրոցեսի սուբյեկտները և շարժիչ ուժերը (պահանջմունքներ և շահեր):

- Ովքե՞ր են պատմական պրոցեսի սուբյեկտները, պատմությունը կերտում են անհատնե՞րը, թե՞ հասարակությունը, պատասխանը պետք է հիմնավորել:
- Ուրիշ ի՞նչը կարող է լինել պատմության շարժիչ ուժ, կարելի է խոսել մի քանի նպաստող գործոնների մասին, օրինակ՝ տնտեսական, տեխնոլոգիական:
- Պահանջմունքները և շահերը՝ որպես պատմության շարժիչ ուժեր. տարբերակել, նշել առանձնահատկությունները:

3.-րդ կետի թեման հետաքրքիր դարձնելու համար, կարելի է հիմնախնդիրը դիտարկել հասարակական կյանքի հիմնական ոլորտների (տնտեսական, սոցիալական...) պրիզմայով

#### 43. Հասարակության սոցիալական կյանքի ընդհանուր բնութագիրը:

- Ի՞նչ ենք հասկանում հասարակական կյանքի սոցիալական ոլորտ ասելով. փորձել սահմանել, նշել առանձնահատկությունները, նպատակները:
- Մարդկային հանրությունների պատմական ձևերը՝ տոհմ, ցեղ, ժողովուրդ, ազգ:
- Հասարակության սոցիալական կառուցվածքը:

3-րդ կետը շատ մանրամասնել պետք չի. եթե այս թեմայով մեր (անցումային) հասարակության հետ կապված հետաքրիքը դիտարկումներ գտնեք, շատ ավելի լավ

#### 44. Անցումային հասարակություն

- Ո՞ր հասարակություններն են կոչվում անցումային: Ի՞նչն է դրանց բնորոշ:
- Անցումային հասարակության իրավական և գործունեական մակարդակները:
- Որո՞նք են հիմնական դժվարությունները (խոսել տնտեսական և քաղաքական կյանքի վերակառուցման մասին):
- Ի՞նչն է բնորոշ արդի անցումային հասարակություններին: Ինչի՞ կարող է դա հանգեցնել:

Այս հարցը պատրաստելիս, նկատի ունենալ, որ խոսքն առավելապես գնալու է հետխորհրդային անցումային հասարակությունների մասին:

! Այս հարցի կապակցությամբ տեղադրված է լրացուցիչ նյութ [հղում](#)

#### 45. Հասարակության քաղաքական կյանքի ընդհանուր բնութագիրը: Պետություն և իրավունք:

- Ի՞նչ ենք հասկանում հասարակության քաղաքական ոլորտ ասելով, ի՞նչ է ուսումնասիրում քաղաքական փիլիսոփայությունը, ի՞նչով է քաղաքական փիլիսոփայությունը տարբերվում քաղաքական կյանքը ուսումնասիրող այլ գիտություններից:
- Ո՞րն է քաղաքականության նախահիմքը:
- Պետությունը՝ որպես քաղաքական համակարգի կարևորագույն օղակ, բնորոշ հատկանիշները:

#### 46. Հասարակության տնտեսական ոլորտի ընդհանուր բնութագիրը:

- Հասարակության տնտեսական ոլորտը՝ որպես նյութական բարիքների ստեղծման ոլորտ:
- Տնտեսական պահանջմունքները և շահեր: Այստեղ կարելի է օգտագործել գաղափարների ֆորմացիոն տեսությունից և Մասլոուի բուրգից ([հղում](#))
- Հասարակական կյանքի նյութական ոլորտի փիլիսոփայական ուսումնասիրության որոշ եզրահանգումներ:

Հակոբյանի դասագրքում այս թեմայի վերջում կատարվում են որոշ նման հարցադրումներ: Ոչ թե նույնությամբ կրկնել, այլ փորձել մտածել այդ ուղղությամբ ... Կարելի է խոսել նաև ժամանակակից տեղակատվական հասարակության գիտելիքահեն տնտեսության մասին:

#### **47. Ընտանիքը սոցիալական համակարգի կառուցվածքում:**

- Ընտանիքը՝ որպես մարդկանց կենսագործունեության ինքնատիպ ձև:
- Դրա կարևորությունները, գոյության կարևոր նախապայմանները:

Ցուցում՝ պատասխանը ավելի հետաքրքիր և բովանդակալից դարձնելու համար, բացի Հակոբյանի դասագրքի տեքստից կարելի է վերցնել ավանդական (հայկական) և ժամանակակից (եվրոպական) ընտանիքների մոդելները և համեմատական վերլուծություն անել՝ յուրաքանչյուրի ուժեղ և թույլ կողմերով:

#### **48. Հասարակության հոգևոր կյանքի ընդհանուր բնութագիրը:**

- Հասարակության հոգևոր կյանքի բովանդակությունը և համակարգաստեղծ գործոնը
- Հոգևոր արժեքների արտադրության և սպառման առանձնահատկությունները:
- Հոգևոր կեցության հիմնախնդիրը

Ցուցում: Հարցադրումը արդիականացնել և հարստացնել՝ «նյութականի և հոգևորի փոխհարաբերության հիմնախնդիրը արդի դարաշրջանում» թեմայի շուրջ սեփական մտորումներով:

#### **49. Ազգային հոգեբանության կառուցվածքային բութագիրը:**

- Ազգային հոգեբանություն հասկացությունը, տալ սահմանումը:
- Ազգային հոգեբանության բաղադրիչները՝ ազգային զգացմունքներ, ազգային տրամադրություններ և ազգային հոգեկերտվածք:

Պատրաստել հետաքրքիր օրինակներ քննարկելու համար

#### **50. Ազգային ինքնություն և ազգային խառնվածք:**

- Ի՞նչ ենք հասկանում ազգային ինքնություն ասելով, որո՞նք են դրա կարևոր բաղադրատարրերը:
- Ազգային խառնվածք:
- Հայ ազգային ինքնության առանձնահատկությունների ձևավորման պատմական գործոնները:

Ցուցում՝ 3-րդ կետի համար կարելի է վերցնել հայ ինքնության կոնկրետ առանձնահատկություններ և փորձել բացատրել դրանք մեր պատմական ճակատագրի այս կամ այն դրվագներով:

**51. Հասարակական գիտակցության կառուցվածքը: Հասարակական հոգեբանություն և գաղափարախոսություն:**

- Ի՞նչ ենք հասկանում հասարակական գիտակցություն ասելով:
- Գիտակցության գործնական-առօրեական և տեսական մակարդակները, դրանց ենթամակարդակները:
- Հասարակական հոգեբանության ըմբռնումը, պատրաստել հետաքրքիր օրինակներ:
- Հասարակական (ազգային) գաղափարախոսության բնորոշ հատկանիշները:

**52 Հասարակական գիտակցության ձևերը և դրանց տարբերակման չափանիշները**

- Ո՞րն է գիտակցության հասարակական ձևը և ինչպես է այն ձևավորվում
- Հասարակական գիտակցության ձևերի տարբերակման հիմքերը:
- Հասարակական գիտակցության ձևերի առանձնահատկություններն ու բնորոշ հատկությունները:

**! Նկատի ունեցեք, որ այստեղ խոսքը գնում է հասարակական գիտակցության կրոնական, բարոյական, գեղագիտական ... ձևերի մասին**

**53. Բարոյական գիտակցություն**

- Բարոյական գիտակցության առանձնահատկությունները: Բարոյական և իրավական գիտակցությունների տարբերությունը:
- Բարոյականի մասին տարբեր ըմբռնումներ ու դիրքորոշումներ (հեղոնիզմ, էվդեմոնիզմ, ճգնավորություն...):
- Բարոյական իդեալը որպես բարոյական գիտակցության բարձրագույն արտահայտություն:

**54. Գեղագիտական գիտակցություն:**

- Ի՞նչ է իրենից ներկայացնում գեղագիտական գիտակցությունը, տալ սահմանումը:
- Խոսել վերջինիս համադրող և սինթեզող բնույթների մասին:
- Արվեստը՝ որպես գեղագիտական գիտակցության բարձրագույն ձև. համառոտ անդրադարձ:

**55. Գիտության սոցիալական ֆունկցիաները: Սցիենտիզմ և հակասցիենտիզմ:**

- Ի՞նչ է գիտությունը, ինչն է ընկած նրա հիմքում:
- Որո՞նք են գիտության սոցիալական ֆունկցիաները:
- Սցիենտիզմի և հակասցիենտիզմի գաղափարախոսությունը:

! Գիտության սոցիալական ֆունկցիաների համառոտ նկարագրությունը [հղում](#)

**56. Մարդ, անձ, անհատականություն հասկացությունների փիլիսոփայական բնութագիրը:**

- «Մարդ» հասկացությունը, իրեն բնորոշ հատկանիշները:
- «Անձ» հասկացությունը, դրա տարբերությունը «մարդ»-ուց:
- Անհատականության հիմնական որակները:

! Ուշադրություն՝ հարցը Հակոբյանի դասագրքով սովորելիս առաջնորդվում ենք հարցաշարի ձևակերպումով և այնտեղից վերցնում ՄԻԱՅՆ վերոնշյալ 3 հասկացությունների բնութագիրը:

## Հաջողություն

Ուղեցույցի հետ կապված հարցերի դեպքում կարող եք գրել հեղինակին  
[arman\\_gharagulyan@ysu.am](mailto:arman_gharagulyan@ysu.am) էլեկտրոնային հասցեով: